ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE93-0FC8-44D8-A866 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Քաղաքացիական գործ թիվ *ԵԴ2/13775/02/25*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահող դատավոր Աննա Ճիլաջյանի

2026 թվականի հունվարի 16-ին քաղաք Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան) քննարկելով կասեցումը վերացնելու վերաբերյալ պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Ռեդի-Սթեդի ՍՊ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան հիմնադրամ» ՀՄԴ-ի՝ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար Սննդի պատրաստման և մատուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-2026/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.12.2025թ նիստի թիվ 2 արձանագրությամբ «Բնական Բարիքներ» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատելու և «Բնական Բարիքներ» ՍՊ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը էլեկտրոնային դատավարության համակարգի միջոցով (այսուհետ՝ Համակարգ) 25.12.2025 թվականին, ժամը 15:52-ին ստեղծվել է (ներկայացրել է) հայցադիմում, որը 25.12.2025 թվականին մակագրվել է դատավորին, իսկ Համակարգում դատավորին և նրա աշխատակազմին հասանելի է դարձել նույն օրը ժամը 21:30-ին:

Հաշվի առնելով, որ այդ պահին աշխատանքային ժամն ավարտված է եղել, Համակարգում հասանելի դառնալու պահ է համարվում 26.12.2025 թվականը:

Դատարանի 07.01.2025 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, պատասխանողից պահանջվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները և դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 19.02.2026 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Դատարանի 13.01.2026 թվականի որոշմամբ «Բնական Բարիքներ» ՍՊ ընկերությունը ներգրավվել է որպես վեճի առարկայի նկատմամբ ինքուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ:

Պատասխանող Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան հիմնադրամ» ՀՄԴ-ի ներկայացուցիչ Ալ. Մանուչարյանը 15.01.2026 թվականին ներկայացրել է միջնորդություն գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին, որով մասնավորապես հայտնել է.

« (...) Տվյալ դեպքում գնման գործընթացի շարունակելը բխում է բացառապես վարժարանի շահառուների՝ թվով 250 սաների հանրային շահից, քանի որ նշված գնման գործընթացը վերաբերվում է վարժարանում սննդի պատրաստման և մատուցման ծառայությանը և նշված գործընթացի կասեցումը կհանգեցնի վարժարանի բնականոն գործունեության իրականացման անհնարինությանը:

Նշված հիմնավորմամբ խնդրում եմ կայացնել վիճարկվող գնման

գործընթացի կասեցումը վերացնելու վերաբերյալ որոշում:»:

Ուսումնասիրելով միջնորդությունը, կից փաստաթղթերը՝ Դատարանը արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ *երեսուն օրվա ընթացքում*: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:

Վերոնշյալ իրավանորմերի հիման վրա Դատարանը կարևոր է համարում արձանագրել, որ օրենսդիրը բացառիկ դեպքերի համար է հնարավոր համարել գնման գործընթացի կասեցման վերացումը, մասնավորապես, ի թիվս այլնի, գնման գործընթացի կասեցումը կարող է վերացվել, եթե հանրային շահերից ելնելով՝ առկա է գնման գործընթացը շարունակելու անհրաժեշտություն: Ավելին, այս անհրաժեշտությունը հիմնավորելու պարտականություն կրում է նման միջնորդություն հարուցողը: Հետևապես յուրաքանչյուր դեպքում նման հարց լուծելիս միջնորդություն ներկայացնողը պետք է հիմնավորի, որ օրենքի ուժով գնումների գործընթացի ինքնաբերաբար կասեցմամբ հետապնդվող նպատակները տվյալ գործի կոնկրետ փաստերի շրջանակներում հանրային շահի ապահովման համատեքստում ունեն նվազ կարևորություն:

Անդրադառնալով համաչափության պահանջին, այլ կերպ ասած՝ այն հարցին, թե արդյո՞ք նշված սահմանափակումը պիտանի և անհրաժեշտ է

ժողովրդավարական հասարակությունում հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է.

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով համաչափության սկզբունքի բովանդակությանը, արձանագրել է, որ համաչափության սկզբունքի առանցքային կարևորությունն այն է, որ դրա կիրառումը հնարավորություն է տալիս գնահատել պետության միջամտության ընթացքում կիրառվող միջոցների գործադրմամբ նպատակին հասնելու հնարավորությունը և թույլատրելիությունը: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ համաչափության սկզբունքը կոչված է երաշխավորելու, որպեսզի այս կամ այն հանգամանքներում համարժեքություն ապահովվի կիրառվող միջոցների և դրանց կիրառմամբ հետապնդվող նպատակի միջև՝ համարժեք արձագանքելով որևէ իրավիճակի: Ըստ այդմ, համաչափության սկզբունքը բաղկացած է երեք տարրերից՝ պիտանիություն, անհրաժեշտություն և չափավորություն: Այսինքն՝ գործադրվող միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Համաչափության սկզբունքի այն պահանջը, համաձայն որի՝ հետապնդվող նպատակին հասնելու համար գործադրվող միջոցները պետք է լինեն պիտանի, նշանակում է, որ իր հայեցողությանը վերապահված միջոցներից պետությունը պետք է ընտրի այն միջոցը, որով կարող է հասնել այդ նպատակին: Եթե պիտանի միջոցները մեկից ավելի են, ապա դրանցից պետք է ընտրվի տվյալ նպատակին հասնելու համար առավել անհրաժեշտը, իսկ պիտանի և անհրաժեշտ միջոցներից՝ այն միջոցը, որը առավել նվազ ձևով միջամտելով անձի իրավունքներին, այդուհանդերձ, թույլ է տալիս առավելագույնս հասնել հետապնդվող նպատակին: Չափավորությունը ենթադրում է, որ անհրաժեշտ և պիտանի միջոցը միևնույն ժամանակ պետք է ապահովի ողջամիտ հավասարակշռություն ձեռնարկվող միջամտության և հետապնդվող նպատակի միջև (տե՛ս, Մհեր Ավետիսյանը և մյուսներն ընդդեմ «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/1807/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.11.2015 թվականի որոշում):

Տվյալ դեպքում Դատարանն արձանագրում է, որ թիվ ՍՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-2026/01 ծածկագրով հրատապ բաց մրցույթը հայտարարվել է «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան հիմնադրամ» ՀՄԴ-ի կողմից, որի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով առաջարկվելու է կնքել սննդի պատրաստման և մատուցման ծառայության պայմանագիր:

Այդ կապակցությամբ Դատարանն արձանագրում է, որ սննդի

պատրաստման և մատուցման ծառայություններն իրենց բնույթով ունեն կենսական և անփոխարինելի նշանակություն վարժարանի սաների առօրյա կյանքի, նրանց առողջության պահպանման և հաստատության բնականոն գործունեության ապահովման համար:

Դատարանի գնահատմամբ գնման գործընթացի տևական կասեցումը տվյալ պարագայում կհանգեցնի թվով 250 սաների սննդի մատակարարման ընդհատմանը կամ պատշաճ կազմակերպման անհնարինությանը, ինչն իր հերթին կխաթարի վարժարանի՝ որպես կրթական հիմնադրամի բնականոն կենսագործունեությունը: Նման իրավիճակը չի բխում հանրային շահերից, քանի որ սաների կենսապահովման տարրական պայմանների վտանգումը չի կարող համարվել համաչափ գնման գործընթացի մասնակիցների հնարավոր իրավունքների պաշտպանության հետապնդվող նպատակին:

Ավելին, Դատարանը գտնում է, որ մինչև սույն գործի քննությունն ավարտվի և առկա լինի օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտ, սննդի մատուցման ծառայությունների բացակայությունը կամ դրանց հետաձգումը կարող է առաջացնել անդառնալի հետևանքներ վարժարանի շահառուների համար: Հետևաբար, միջնորդությամբ ներկայացված պահանջը՝ գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին, պիտանի, անհրաժեշտ և չափավոր է հանրային շահերի պաշտպանության տեսանկյունից, քանի որ թույլ է տալիս կանխել սաների իրավունքների և առողջության հնարավոր խաթարումը:

Ելնելով վերոգրյալից՝ Դատարանը գտնում է, որ պատասխանող Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան հիմնադրամ» ՀՄԴ-ի 15.01.2026 թվականին ներկայացված՝ թիվ ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-2026/01 ծածկագրով գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ, 200-րդ և 361-րդ հոդվածներով և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը բավարարել:

1.1. Վերացնել թիվ «ՄՄԱՌՎ-ԲՄԾՁԲ-2026/01» ծածկագրով գնման գործընթացի՝ օրենքի ուժով առաջացած կասեցումը:

2. Որոշումը օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան**

Digitally signed by SHILAJYAN ANNA 5208910872
Date: 2026.01.16 16:56:38 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am